

ԹՈՎԱՄԱՍ ԱԼՎԱ ԷՏԻՍՈՆ

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԵԾ ԳԻՏՆԱԿԱՆՈՐ

(իր ծննդեան հարիւրամեակին առթիւ)

Ազգերու պատմութիւնը կը խօսի դէպքերու մասին, որոնք ժողովուրդներու կենցաղը, գոյավիճակը կերպարանափոխելով՝ բարոյական եւ ընկերային ամենամեծ յեղաշրջում յառաջ բերած են. ինչպէս՝ կայսրութիւններու տապալումը, տպագրութեան եւ նոր աշխարհի գիւտը, Փրանսական յեղափոխութիւնը, վերջին համաշխարհային պատերազմը եւ Մարքսիզմի ընդհանուր ընկերային շարժումը: Երբ իմաստասիրօրէն մօտենանք այս աշխարհ ցնցող դէպքերու բնոյթը քննելու, մեր մտքին առջեւ կը բեւեռի սա արդարացի հարցումը. «Այս յեղաշրջումները իրականին մէջ՝ ո՞րքան նպաստաւոր ազդեցութիւն գործած են մարդկութեան վրայ. ի՞նչ բարիք բերած են, եւ թէ ի՞նչ է իրենց դրական արժէքը գործնականին մէջ»: Այս հարցումներուն պատասխանելու ատեն կը գտնուինք բաւական ընդարձակ եւ կնճոռոտ, թէեւ շահեկան ընկերային խոշոր հարցի մը առջեւ՝ զոր վերլուծելու համար առանձին ուսումնասիրութիւն անհրաժեշտ է:

Այս ակնարկով հարցը հոս կը թողում եւ ուշադրութիւնս կը դարձնեմ՝ ինքնին շատ պարզ, եւ թերեւս մեր շատերուն հայեացքէն վրիպող դէմքի մը վրայ, մարդու մը կեանքին, անոր գործունէութեան, գիւտերուն եւ անոնց մարդկային ընկերութեան մէջ ստեղծած յեղաշրջումին վրայ, յեղաշրջում մը որ թերեւս վերոյիշեալ յեղափոխութիւններէն շատ աւելի օգտակար եւ անոնց հաւասար քաղաքակրթութեան ու յառաջադիմութեան նպաստած է, մշտնջենաւոր փարոս մը կանգնելով, գիտութեան տիեզերական անձայր ուղիին վրայ:

Միացեալ Նահանգները անցեալ փետրուարին՝ Թովմաս Էտիսոնին հարիւրամեակը տօնած ատեն՝ իրաւունք ունէին աշխարհին ամենամեծ գիտնականներէն ու բարեւարներէն միոյն անունով պարծենալու, ու զայն ներկայացնելու իբր միջազգային ամենամեծ դէմքերէն մին:

Բազմաթիւ օրաթերթեր ու հանդէսներ այս մեծ Ամերիկացիին հարիւրամեակին արձագանգն ըլլալով, մարդկութեան դնահատանքի եւ երախտագիտութեան տուրքն է որ կը բերեն դնելու անոր անմահ շիրմին առջեւ:

Համեստ ընտանիքի մը այս դաւակը, Էտիսոն, ծնած է 1847 փետրուար 11ին Մ. Նահանգներու Օհիօ նահանգին Միլան քաղաքը. ան հօրմէն կը ժառանգէ միայն առողջ կազմ, բարոյականի ու նկարագրի կորով: Մայրը կ'ըլլայ իր ուսուցիչը ու միակ դաստիարակը: Մանուկ հասակին ըրջօրէն կը փարի գիտութիւններու եւ դեռ մետասանամեայ՝ իր տան մէջ կը կազմէ բնագիտական աշխատանոց մը. օրապահիկը հայթայթելու համար՝ 1861ի պատերազմի շրջանին, չողեկառքերու մէջ՝ լրագիր, ծխախոտ եւ անուշեղէն կը ծախէ: Բայց ասով դոհացում չի գտներ, եւ իրեն յատկացուած խցիկին մէջ փոքր տպարան մը կը շինէ ու «շաբաթական սուրհանդակ» անունով թերթ մը կը սկսի հրատարակել՝ որուն յօդուածագիրը ու տպագրիչը Էտիսոնն ինքն էր: Տաղանդաւոր երիտասարդը յատուկ սէր մ'ունէր մեքենագիտութեան: Ինքնիրեն կը շինէ հեռագրական գործիք մը, եւ 1863ին Stratford Junction (Քանատա) կայարանը գինք կ'ընդունի իբր հեռագրիչ պաշտօնեայ: Եւ ապա ան կը մտնէ Western Union Telegraph ընկերութեան մէջ, ու զանազան քաղաքներ աշխատելէն ետք՝ կու գայ Պոսթըն հաստատութիւն: Էտիսոն շարունակ կ'ուսումնասիրէր Փարատէյի գործերը. չ'ուզեր պաշտօնեայ մնալ, ստեղծագործող միտքը գո-

հացում չի գտներ, կը հեռանայ ընկերութեանէն եւ Նիւ Եորք կու գայ: Գրականին մէջ ան մէկ տոլար միայն ունէր եւ ան փոխ առած էր: Բայց Էտիսոն կ'արհամարհէր յուսահատութիւնը. կը լծուի հեռագրիչի եւ կը յաջողի. առաջին անաշխատանքի եւ կը յաջողի. առաջին անգամ մենաշնորհի արժանացած գիւտը կ'ըլլայ խորհրդարանին քուէները թուանշող գործիք մը, թէեւ շատ ընդունելութիւն չի գտներ. կը շինէ կրկնազիր (duplex) հեռագործիքը, բայց աւելի բախտաւոր կ'ըլլայ սակարաններու շարժումը արձանագրող ժամացոյցին (stock ticker) վրայ հնարած նորութիւնը, եւ զոր անմիջապէս կը գնէ Gold Stock Telegraph ընկերութիւնը 40.000 տոլարի: Էտիսոն՝ ձորձ Լիթլըին հնարած ինքնահեռագրի գործիքը կը կատարելագործէ, եւ 1879ին զայն անձամբ փորձելու համար Անգլիա կ'անցնի. եւ միեւնոյն ատեն կը հնարէ կանգնի հեռագրագործիքը, զոր անմիջապէս կ'իւրացնէ Jay Gould ընկերութիւնը 30.000 տոլարի փոխարէն: Էտիսոն՝ անխոնջ գործունէութեամբ զանազան գիտութիւններու գաղտնիքներուն թափանցած՝ շարունակ նորութիւն հնարելու ետեւէ էր: Ան՝ Շոլսին կ'օգնէ մատնագրի մեքենան շինելու գործին մէջ, մինչդեռ ինք կը հրաշքերով գործին մէջ, ինչ որ երեւոյթներ արեւելքի մiméograph-ը. 1875ին երկրորդական փորձերու ատեն ինչ ինչ նոր երեւոյթներ կ'անդրադառնայ, սակայն «եթերային ուլտրաթիւն չի տար, ինչ որ տասներկու տարի ետք Հէյք գերմանացիին անոնց լատարիս ու ճշգրիտ բացատրութիւնը կու տայ: 1876ին՝ Կոհսամ Պէլ հնարած հեռաձայնը, բայց Էտիսոն զայն գործնականի կը վերածէ, այն ատեն Western Union-ը հարիւր հազար տոլար կը վճարէ Էտիսոնին համար եւ ապա նոյնքան եւս այս գիւտին համար եւ ապա նոյնքան եւս երկրորդաբարձ գրի մեքենայի մենաշնորհը գնելու համար: Նոյն տարին՝ Էտիսոն

Անգլիոյ կը ծախէ հնարած բարձրախօս հեռաձայն գործիքին գիւտը 30.000 սթեռլինի: Տարի մը ետք կը հնարէ ձայնագիր մեքենան (Phonographe), զոր տաս տարի ետք պիտի կատարելագործէր: Տաղանդաւոր գիտնականին մտքի լոյսը ելեքտրութեան մէջ կը սկսի որոնել իրական լոյսի ճառագայթը. 1877ին սկսեալ զանազան փորձերէ ետք, 1880ին կրնայ այդ գաղտնիքին ալ թափանցել, ընկերային կեանքի բոլոր խաւերուն մէջ ստեղծելով նոր ոգեւորում մը եւ նոր ապրելակերպ: Փարիզի երկտրական ցուցահանդէսին մէջ, 1881ին, Էտիսոն իր այս գիւտը ամբողջ կազմով յայտարարելով՝ թէ՛ գիտական եւ թէ՛ քաղաքական աշխարհի մէջ մեծ հիասթափում առաջ կը բերէ:

Շատ մը երկիրներ կը սկսին մեծ տենդով երկտրալամբի շինութեամբ զբաղիլ: Էտիսոն 1880-6 երկտր. երկաթուղիի գործով կը զբաղի եւ կը հաստատէ Railway Company of America ընկերութիւնը: Թ. Դարու երկրորդ կիսուն շատ մը գիտնականներ ետեւէ էին փորձերու միջոցաւ հրաշքերու գործիք մը, որ կարենար առարկաներու զանազան դիրքերու, ձեւերու յարդական պատկերները ներկայացնել, ձիւրու եւ մարդերու դնաքին, վաղքին յաջորդական շարժումները լուսանկարելով ու զանոնք յաջորդաբար պատկերացրելով, ինչ որ իրարու հետեւող բնական շարժումներու երեւոյթ մը պիտի տար: Էտիսոն ներշնչուելով Հոնէրի, Մայքրաճի եւ Փրանսացի Մարէյի փորձերէն, կը խորհէր հնարել գործիք մը՝ որ տեսութեան ծառայէր այնպէս՝ ինչպէս իր ձայնագիրը կը ծառայէր լսողութեան: Եւ 1882ին հնարած գործիքին կը յարմարէ՝ Թ. Ինթմանի պարզ լուսանկարի՝ նորագիւտ լուսապատկերի թափանցիկ եւ զգայուն երկրները. եւ ասով Էտիսոն կը հնարէր շարժապատկեր (cinéscopie), ու ներկայ բա-

